

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԵՐ¹⁾

թւ

Զու. Զանձաղ դիւղը: «Աստուածակառն» տւետարան: Ազափ դիւղը. Հըննառ լետուը. Քեօփրի քէցուը. Արաբսի սկզբի մասին. Աւերակ կարաւանարա Զորանիկ կամուրջը. Եալշն դիւղի հայ աղջիկների ճարպիկութիւնը. Կամրջի արևատագրութիւններ: Առասպեկ կամրջի մասին: Եպրակացութիւնն

Անցաւ մայիսն, եկաւ յունիսն և Արզրումի կողմից եկող ու անցնող հիւանդների թիւն օրըստօրէ սկսեց նուազել, որպիսի հանգամանք միջոց տուաւ ինձ մի քանի օրով հեռանալ Կուրառւրդանից դէսկի արևմուտ՝ նորանոր տեղեր տեսնելու:

Անցայ Զիվին, թողի աջ կողմում Քեչասուր (Քաջաձոր) գիւղը, բարձրացայ Հոռոմ դիւղին և նորան նորից զննեցի աջ ու ձախ, յետ ու առաջ, և հեռուից տեսայ Հոռոմ գիւղը, մինչև 1830 թուականը յունաքնակ, իսկ այնուհետև և այժմ քիւրդարնակ: Ապա ճանապարհի վերայ առաջս եկաւ գեղեցիկ հովտի մէջ Սանամեր կամ Սանամերիկ գիւղը, որ 30 թուականին բաւական թուով հայ դաղթականներ տուաւ, իսկ այժմ ունի թուրք ու հայ բնակիչներ:

Հետաքրքրական է, որ Բասենում շատ գիւղեր թէն այժմ ոչ հայարնակ, կրում են հայկական անուն, ինչպէս են Սանամեր, Մժնկերտ, Զագ, Զանձաղ, Ծառս, Պետրավանք, Եզնոց, Արտոց, Արդի, Զրասուն, Փոքրիկ, Զիթահան, Գոմիկ, Կռնասւկ, Աղորան, Քաջաձոր, Հարսնաքար, Ագարակ, Իշխու, Ամրագոմ, Թորդան, Բլուր, Գնդեղի, Պատիժվան, Միատուն, Սուրբ Յոհան, Ձերմուկ, Քեղվանք, Փորսող, Հայքուրդ, Դուռը, Սոս և այլն, որոնք, ինչպէս յետոյ կտեսնենք և մասամբ տեսանք, փոքր ինչ փոխուել են ըստ յատկութեան թուրք լեզուի:

Սանամերից հարաւ և ոչ հեռու, ճանապարհի վերայ դը-

1) Տես «Առմայ» № 2

րած է կէս թուրք կէս հայ բնակչութեամբ Զանծ լնի կամ Զանձաղ, թուրքերէն Զանզաղ, ևուսերէն Զանզաք գիւղը, Սանամերից հոսող առուակի վերայ: Հայերն եկած էին այստեղ տասներկու տարի առաջ Նարման գաւառից. ունէին խիստ չքաւոր կենցաղ, թէև թափիով գնել էին հող: Սոքա աղ ու հացով ընդունել էին գեներալ Յովհաննէս Լազարեանին Արգրում գնալու ժամանակ և սոտացել էին նորանից 10 ևուբին նուէր:

Թուրքերի և հայերի տները նման էին ամենահասարակ խրճիթների, մարդկանց հագուստը թշուառ, ամէն բանի մէջ չքաւորութիւն և ես աշքերով իզուր էի որոնում գիւղական եկեղեցին, որի մասին բնակիչները յայտնեցին իսկոյն թէ դեռ ևս եկեղեցի չունին, քահանան էլ ընդամէնը չորս ամիս է՝ որ եկել է Նարմանից, ժամասացութիւնը կատարում է իւր խրճիթում, ուր և հաւաքւում են ծխականները փառաբանենելու ամենաբարձրեալ Աստուծուն: Գնացի տեսնելու քահանայի ու Աստուծոյ տունը: Մտայ ներս. վառարանի (բուխարի), ուր ամանի մէջ եփում էր սև սուրճը, երկու կողմում սփռուած էր անկողին և սորանց մօս խոնուել էին իրար ովհապի գառնուկները, մերթ իրար հրելով, մերթ բարձրանալով կալի կամների, սայլի և նորա ակների վերայ, որոնք միւս տեսակ տեսակ տնային կահ կարասիքների հետ խառն ի խուռն դարսուած էին այդ թշուառ խրճիթում:

Այդ միջոցին մօտեցաւ ինձ քրդի հին շորերով մի մարդ և ողջունեց ինձ. «Բարի ողջոյն» խօսքերով, որից ես եղրակաց ըի, որ նա քահանան է, Աստուծոյ փոխանորդը: Իմ հարցին թէ ժամասացութիւնը որ սենեակումն է կատարուում, փոխանորդը ցոյց առւաւ սոյն սենեակը ու նորա անկիւնում կախած սուրբ Աստուածամօր պատկերը: Հին գերեզմանատնում եղած է եկեղեցի, այժմ բոլորովին աւերակ:

Նարունակեցի ճանապարհ և հասայ Արդոս գիւղը Սանամերի առուակի և միւս առուակի միացման տեղը: Բնակիչները հայեր են, Առաջուց լսել էի, որ այս գիւղում կայ, ամբողջ Բասենի հայ ժողովրդին յայտնի, մի խիստ զօրաւոր աւետարան Աստուածախառն անոնչով, որին ամեն կողմից ուխտ են գալիս հաւատացեալները: Որովհետև աւետարանը եկեղեցում չէր, այլ երկու եղրարց Գրիգոր և Պողոս Պետրոս սեանների մասնաւոր սեպհականութիւն էր, ուստի ես դիմեւ ՀՈՒՄԱՑ

ցի ուղղակի ուխտատեղին, ինձ ընդունեցին իբրև ուխտառը, սակայն կասկածով, ըստ որում հետո կային ոռու կազմակների թերին աւետարանը փաթաթած մետաքսեայ թաշկինակների մէջ: Փոքր ինչ դժգոհութեամբ եղբայրները համաձայնեցին բանալ աւետարանը, որ ուզում էի անպատճառ տեսնելու իննը մետաքսէ թաշկինակից ազատուած Աստուածախառն աւետարանը գրչագիր էր, թղթի և ոչ մադաղաթի վերայ գրած Հիշան քաղաքում, երկար ու չիդ յիշատակարանով, բայց ջըն-ջուած, անորոշելի թուականով:

Թողնելով հարաւում Մառս կամ թուրքերէն Զարս և Խո-րասան գիւղերը, ես թեքուցի արևմուտ և շտապում էի Ա-զափ, ուր բնակում էր Բասենի գաւառապետ ինձ քաջածա-նօթ Թաղէոս Տիգրանհանը: Ազափն առաջ եղել է հայաբնակն իսկ այժմ՝ է թթքաբնակ: Հայոց եկեղեցին վաղուց արդէն քան-դուել՝ անհետացել է, իսկ գերեզմանատան տապանաքարերը կամաց կամաց անհետանում են շինութիւնների վերայ:

Թաղէոս Տիգրանհանի (այժմ՝ անդուցեալ) սեղանն առա-տութեամբ բացում էր ամենայն օր Ազափում եղած բոլոր ծառայողների առաջ, որ բազմաթիւ չէին: Մասնակիցներն էին քարտուղարը, նորա օվնականը և երկու զինուորական ոռու աստիճանաւորները, որոնցից մինը, յիշում եմ, իւրաքանչիւր ճաշին, չքաշուելով հիւրասէր տանտիրոջից, շաբունակ ծաղրում էր հայոց երգերի եղանակն ու յայտնում էր իւր ատելութիւնը տեղական գիւղաբնակ հայերի դէմ, որոնք չէին կատարում աստիճանաւորի որև է ցանկութիւնը: Օրինակ, նա խիստ դժգոն էր, որ մի հայ գիւղացի չէ տուել աստիճանաւորին նո-րա առաջարկած գնով մի փոքրիկ գորգ (խալիչա) և երբ Թա-ղէոս Տիգրանհանը նկատեց, թէ ինչի անպատճառ ձեր առա-ջարկած պակաս գնովը տար, աստիճանաւորը զայրացած պա-տասխանեց.

—Նորա համար պէտք է տար, մինչև անգամ պէտք է ընծայէր, որ մենք նորանց բարերարներն ենք, եկել ենք մեր արինը թափելու և նորանց, այսինքն Թիւրքիայի բույրը քրիստոնեաներին թուրքի լծից ազատելու... այս պատերազմը քրիստոնեաների համար է:

—Այո, այս պատերազմը քրիստոնեաների համար է, բայց եւրոպական մասի քրիստոնեաների համար է... նկատեց Տիգրանեանուն և հանաքով շարունակեց, թէ ոչ ես եմ թափել

իմ արիւնը և ոչ գուք, պարոն Բաշնեակ (այդպէս էր աստիճանաւորի անունը) ըստ որում ևս՝ իրրե գաւառապետ, իսկ գուք՝ իրրե զօրբի պաշար պահող երբէք չենք եղել պատերազմի կրակի մէջ ու իրաւոնք չունենք մեզ վերագրելու ուրիշի թափած արիւնը, ուստի գնացէք ու աւելի բարձր գնով դնեցէք ձեր հաւանած գորգը...

Երկու օրից յետոյ հրաժեշտ տուի Տիգրանեանին և գնացի դէպի Հասանղալայի կողմերը: Ազափից, որ նոյն է և Ազափ քէօյ, ճանապարհը դէպի արևմուտ մօտենում է Սըրաքս գետի ձախ ափին և այդ ափով գնում է 7—8 վերստ հայարնակ Քեօփրի քէօյ գիւղը (Կամրջագիւղ): Այստեղ ես նորից տեսայ Հայաստանի այդ սիրելի գետն՝ իւր ողորուն կոհակներով, որին չորս տարի շարունակ տեսնում էի Մասիս լեռան ստորոտից մինչև Օրդուքաթ գիւղաքաղաքը և ապա 1885 թուից, ինը տարուայ ընթացքում տեսայ Մուղանի լայնատարած դաշտի վերայ՝ Բագուի նահանգում: Նորա երկու ափունքն ևս, Ազուփ քէօյից մինչև Քեօփրի քէօյ, ծածկուած էին արօտներով և արտերով:

Զը հասած յիշեալ գիւղը, առաջս եկաւ բարձր լեռնագօտի, որ հիւսիսից հարաւ ձգուելով բոլորովին մօտենում է Արաքսի ձախ ափին, թողնելով արանքում մի տարածութիւն միայն ճանապարհի համար: Լեռոը տեղացի թուրքերը կոչում են Խալիլ դադա (հայր Խալիլ) դադի, մի թրքական սուրբ անձնաւորութիւն, որի գերեզմանը լեռան վրայ է, ուր կայ և մի այր: Խոկ տեղական հայերը անուանում են Հըննառ, չգիտեմ որ տեղից ծագած: Հայր Ալիշանն արտասանում է Հըմնար¹⁾:

Լեռան արևմտեան ստորոտում, դաշտ տեղի վերայ դրած է զուտ հայարնակ Քեօփրի քէօյը, ուր 10 տարի ինձանից յետոյ, այն է 1888 թուի նոյեմբերի 2 ին հանդիպելով պ. Լեռն Սարգսեանցը, բաւականին տեղեկութիւն է տալի ընակչութեան զբութեան մասին²⁾: Գիւղը դրուած է այնպիսի մի նշանաւոր տեղ, որ եթէ իշխող ազգութեան ձրիակերութիւնը չլինի, կարող էր տնտեսապէս շուտ զարգանալ: Արզրումից եկող ճանապարհն այստեղ երկուսի է բաժանւում, Արաքսի աջ ու ձախ ափերով, երկուսն էլ շատ բանուկ կարաւանների երթեւեկութեամբ, ուստի յայտնի է թէ ինչպիսի առ և տուր կարող էր

¹⁾ Այրարատ էջ 24. ²⁾ Այց Թիւրք. Հայ. Էջ 80—84.

լինել երթևեկութեան միջոցին:

Գիւղի արևելքան կողմում, գերեզմանատան մէջ, հանգուցեալ քահանաների տապանաքարերի վերայ նկարած են խաչ, նշանը և բուրգառ, այն ինչ մի քանի աշխարհականների քարերի վրայ կարելի է նկատել սապ կամ ջուր հանելու համար թոկ կապած փոքր դոյլ. որ թուրքերէն կոչում է դօլա: Դերեզմանատան կողքին երևում էին լայնարձակ փորուածներ, որոնց մէջ ամփոփուած էին հիւանդութիւնից մեռած ոռու զինուորների մարմինները:

Փեօփրի քէօյը կարծես դրուած է հին աւերակների վերայ, հողի հաստ շերտերի տակ թաղուած, ըստ որում նորան շրջապատող արտերի մէջ, հողի տակից շարունակ դուրս են դալի կճուճներ, թոնդիրներ, մեծ սրբատաշ քարեր և այլն: Եթէ լինի այդ տեղ գիտնական հետախուզութիւն, գուցէ աւելի իրեղիններ գտնուին և ճշտութեամբ որոշուի Վաղարշաւանի տեղը:

Գիւղից ոչ հեռի, Հըննառի և Արաքսի անցքի բերանին մօտ՝ շինուած էին 1877 թուին թնդանօթների տեղ և երկայն փոսեր (տրանշէյներ), սակայն նոքա թուրքերի կողմից մնացել էին անգործադրելի ոռուաց արշաւանքի դէմ:

Փեօփրի քէօյի դէմ, դէպի հարաւ, Արաքս գետի վերայ և նորա լայնութեամբ, ձգուած է մի հոյակապ քարաշէն կամուրջ, նշանաւոր Զօրան քեօրիին և նորա հիւսիսային ծայրի մօտ դեռ ևս երևում են հին կարաւանսարայի աւերակները. սակայն նախ քան սորանց վերայ խօսելը՝ կամինում եմ երկու բառ արտասանել առաջս հօսող գետերի մասին:

Զօրան քեօրի կամրջից անմիջապէս վերե երկու գետ, մինը արևմուտքից, Հասան ղալայի կողմից, որ և կոչում է Հասան ղալայ չայ, միւրը հարաւից, համարեա ուղղահայեաց առաջինին, որ և կոչում է տեղացիներից Բին գեօլ, միանալով մտնում են՝ Զօրանի կամրջի տակ և այդ տեղից արդէն կոչում են Արաքս կամ Արազ: Սորան համաձայն է 1877 թուին Բեռլինում հրատարակուած Կիպերտի աշխարհագրական քարտէսը այն տարբերութեամբ, որ Բինգեօլը սկզբներում կոչում է սոյն անունով, իսկ դաշտավայր մասում Բասին-սու, այն ինչ Հասան կալա չայ կոչում է ուղղակի Կալասու: Արաքս կոչումն սկսում է կամրջից:

Հայր Ալիշանը «Այրարատին» աւելացրած հայերէն քար-

տիսում ընդունել է Բինգեօլը նախկին Մուրց գետի փոխարէն, իսկ Հասան ղալի գետը Արաքսի փոխարէն։ Այդպէս էլ յիշատակում է նա իւր նկարագրութեան մէջ Այրաբատի շորրորդ երեսում, բայց նոյն գրքի 21 երեսում, արտագրելով հայր Ներսէս Սարգիսեանի նկարագրութիւնը Հասան ղալայ քաղաքի դիրքի մասին, յակամայից հակասում է երկար կրկնելով հայր Սարգսեանի կարծիքը, թէ «է անդ (Հասանկայ) և ստորերկրեայ ճանապարհ ի վերուստ մինչև ցեզը Մուրց գետոյ, որ անընդմիջաբար առ բերդիւն անցանէ։ Ուրեմն եթէ Հայր Ալիշանի սրոշմամբ Մուրցը այժմեան Բինգեօլն է, Հասանդաւայի բերդի ստորերկրեայ ճանապարհը չէր կարող հասնել Մուրցի եզրը, որ Հասանդաւայից ճանապարհը հեռու է առնուազն 15 վերստ։ Այն ինչ յիշեալ ճանապարհը հասնում է Հասանդաւայ գետին, որ նոյնն է և Արաքսը (Ալիշան)։

Եթէ Զօրանի կամրջի մօտից նայէք երկու գետերի վերայ, կտեսնէք որ Հասանդաւայի գետը կամ Հ. Ալիշանի Արաքսը, մի աննշան վտակ է երեսում հսկայական Բինգեօլի առաջ և գուցէ այդ հսկայութիւնն է պատճառն, որ Արաքս գետի ամբողջ երկարութեամբ ցրուած ամեն տեսակ ազգաբնակութիւններն էլ ընդունում են որ Բինգեօլը Արաքսի սկիզբն է, որ Արաքսն սկսում է Բինգեօլ դադից և ժողովրդական երգերի մէջ, իսկ հայ կանայք «ջանգիւլում» մէջ կրկնում են.

Արագ, Արագ, խան Արագ,

Բինգեօլդան կալսան Արագ.

Արաքսի և Բինգեօլի խառնուրդի անկիւնում, կամրջի մօտ, երկու գետի էլ աջ ափերից տարածւում է ընդարձակ հարթ տափարակ, ուր, տարին մի անգամ, վարդավառի տօնին, Բասենի մօտիկ գիւղերի հայ քնակիչները, մեծ և փոքր, երկու սեռի էլ մարդիկ, հաւաքւում են, զբօսնում են, երգում են, պար են բռնում, մենամարտութեան և ձիարշաւի տեսարան են բանում և այլն։

Այժմ դիմեմ հնութիւններին։ Զօրանի կամրջի հիւսիսային ծայրից քիչ վերև, արևմուտ, Հասանդաւայի գետի ձախ ափի վերայ երեսում են հին հոյակապ սրբատաշ քարակառոյց կարաւանսարայի աւերակները, որոնցից երևում է, որ շինութիւնն եղել է մեծ և ընդարձակ, լիովին յարմար ճանապարհորդների և կարաւանների իջևանելու համար։ Ջևն այնպէս է, որ պիսին քանիցս տեսած եմ Արևանի նահանգի զանազան կէտե-

բում և մանաւանդ Դարալագեազում¹⁾, Ումանց կարծիքով սոյն կարաւանսարայն մնացորդ է Վաղարշաւան քաղաքի, որ հիմնեց այդտեղ, Երասիմ և Մուրց գետերի խառնուրդում երկրորդ դարու վերջում, հայոց թագաւոր Վաղարշը, Տրդատ թագաւորի պատը: Կարծողները հիմնում են այն հանգամանքի վերայ, որ Խորենացին պատմում է թէ Վաղարշն ի յիշատակ իւր ծննդեան այդ տեղում, ուր Երասիմն ու Մուրցը խառնում են իրար, շինել է մեծ աւան և իր անուամբ կոչել է նորան Վաղարշաւան²⁾:

Վաղարշաւանը զոյութիւն է ունեցել նաեւ տասնեմէկերորդ դարի կիսում, երբ 1046—7 թուին Սեղուկեան թուրքերն աւերել են այդ մեծ դաստակերտը:³⁾

Արդարէն եղել է այդ տեղ մի դաստակերտ Վաղարշաւան անունով, որից ոչ մի մնացորդ գետնի երեսին չէ երևում, իսկ հողակուտի տակ հետախուզութիւն եղած չէ, որը գուցէ լոյս աշխարհ հանէր Վաղարշաւանի հիմքը, ինչպէս այժմ արտերում գտնում են կճռաներ, թոնդիրներ և այլն: Նւ ես ոչ մի հիմք չեմ գտնում կատել ներկայ աւերակ կարաւանսարայն Վաղարշի շինած աւանի հետ և ենթադրում եմ, որ նա շինուած է միւս, իւր նման կարաւանսարաների հետ, որոնք ցրուած են Երևանի նահանգում:

Բայց աւելի հոյակապ և աւելի հրաշակերտ շինութիւնն այստեղ՝ Քեփրի քէօյի կամ Զօրանի կամուրջն է, որ հիւսիսից հագաւ ձգուած է բուն Արաքսի վերայ, ուր սորանից սակաւ վերև, խառնում են Բինգեօյն ու Հասանլալյի գետը: Իմ հաշուելով, նրա երկարութիւնն է 250 և լայնութիւնը 12 քայլ: Ունի եօթն անհաւասար սրանկիւն կամարակապ աշքեր, որոնցից հիւսիսային ծայրի առաջինը և հարաւային աջափնեաց ծայրի վերջին երկուսը համեմատաբար փոքր են և ցածր, այն ինչ երկրորդ, երրորդ, շորջորդ եւ հինգերորդ աշերը, հաշուելով հիւսիսից, ձախ ափից, միմեանց հաւասար են, մեծ են և շատ բարձր: Հիւսիսային առաջին կամարը քանդուած է

¹⁾ |Քայրերունի, ճանապարհորդական նկատողութիւնք. դի: Խե. Փորձ, 1879 թ. յունվար.

²⁾ Խորենացի. պատմութիւն Հայոց. գիրք Երկրորդ. Կե-էջ 215 (Տփեխու):

³⁾ Հ. Ալիշան. Այրարատ. էջ. 25

և ապա վարկապարագի կարկատած, այնպէս որ այդ կամարի աջն ուղղակի կրաշաղախ պուտով լցրած է։ Սորա մասին Հայր Ալիշանը (Այրարատ) պատմում է, որ Մուս-Օսմանեան երկորդ պատերազմի ժամանակ, 1854 թուին, թուրքերը դիտմամբ քանդել են կամրջի մասն, որպէս զի դորանով արգելք դնեն ուռւսաց արշաւանքին դէպի Կարին, և թէև Կարինոյ Հաֆըզ փաշան հրամայել է կարկատել մերձակայ կարաւանսարայի կոփածոյ քարերով, բայց 13 տարուց յետոյ, Ալիշանի ասելով, նորից քանդուել է և ապա փայտեղէն նիւթով կարկատուել։ Խմ այցելութեան ժամանակ ես ոչ մի տեսակ փայտեղէն շինութիւն չտեսայ, բացի քարեղէնից։

Խւրաքանիւր կամարասինի արևելեան և արևմտեան ճակատները փակուած են բարձր բուրգերով, արևելեան կողմինը կիսարողոր ձեի, արևմտեանը, ուր ջրի հոսանքն անմիջապէս զարկում է, սուր կողքով էն. Թուով բուրգերն, որ անշուշտ կամուրջն ամուր և անսասան պահելու նպատակով են, տասնվեց են, ութն արևելեան և ութն՝ արևմտեան կողմը։ Բուրգերը զարդարուած են երեք ծաղկահիւս գօտիներով։

Կարելոյն չափ աշխատեցի անձամբ և հարցուփորձով գըտնել կամրջի շինութեան մէջ որև է սենեակ, բայց անյաջող նոկ Հ. Ալիշանը (Այրարատ) պնդում է, որ հարաւային ծայրի երրորդ կամարում «սենեակ» մի է փոքրիկ գրամբ և փոքրագոյն լուսամտիւ և համարի կայան պահապանին։ Կամրջի երկու կողմն էլ, նորա ամրող երկարութեամբ պատը բարձրանում է մօտ մի և կէս արշին՝ ճանապարհորդների ապահովութեան համար։

Բայց կան յանդուդն վստահներ, որոնք արհամարհում են այդ ապահովութեան պատնէը և ամենայն ճարպիկութեամբ անվախ վազում են նորա վերայ։ Այսպիսի մի օրինակ ես տեսայ աշքովս, երբ կամրջի վերայ կանգնածս ժամանակ, մի խումբ գիւղացի տղամարդիկ, կանաքը և աղջկունք ու տղայք, սայլերի վերայ նոր քաղած բոլս բորձած, եկան Հըննառ սարից։ Հէնց կամրջին հասած 14—15 տարեկան աղջկունք, մինչև հինգ հոգի, բարձրացան արևելեան կողմի պատի վերայ և միմեանց յետեկից վազեցին մինչև կամրջի հարաւային ծայրը։ Ես հիացայ նորանց ճարպիկութեան և վստահութեան վրայ, բայց ահից սարօսփում էի, թէ մի թեթև սխալմունք, մի անյաջող քայլ, մի պատահական սայթաք կարող էր տանել աղջ-

կանց մինին կամ միւսին այդ ահուելի բարձրութիւնից դէպի
Արաքսի պղտոր ջրերի անդունդը:

Այդպէս մտածում էի ևս միայն, իսկ աղջկանց ծնողներն,
առանց թոյլ անգամ արգելելու, սաւնութեամբ նայում էին
նորանց վերայ, իրեւ մի շատ սուլոր երկոյթի վերայ: Ես էլ իմ
վատահութիւնս փորձելու համար մօտեցայ պատին, վայր նա
մցի, և գետի կատաղի ալիքների հոսանքից աչքերս շաղուե-
լով, իսկոյն յետ բաշուեցի: Զգացի իմ փոքրոգութիւնը մի որև-

նաղանցի հայ աղջկանց առաջ: Այդ խումբը հայեր էին Սա-
ղան գիւղից, ոչ այնքան հեռու Արաքսի աջ ափից:

Կամրջի քարերը կարմիր են և փոքր մասը սակաւ կա-
պոյա, բոլորը նուրբ սրբատաշ. թեթև հայեացքով կարելի է որո-
շել որ հին հիմքի վերայ եղել է սակաւ նորոգութիւն շինու-
թեան: Տեղ տեղ քարերի վերայնկարած են նետ և աղեղ, կամ
խաչեր և կամ հայերէն Ա. տառի նման նշան:

Կամրջի արեւելեան (ոչ արևմտեան—Սլիշան) կողքի ա-
րևելեան ճակատի վերայ, կամարներից վեր, կան երեք (ոչ եր-
կու—Սլիշան) արձանագրութիւն, երկուսը արարական կամ
գուցէ թրքական լեզուով, ինձ անհասկանալի, իսկ երրորդը
հայերէն լեզուով: Խրեքն էլ կամրջի վերի, այսինքն նորոգած
մասումն են և երբ երկու արարականը մմրող մնացել են,
ընդհակառակը, հայկականը ջնջուած է և կարծես դիտմամբ,
մուրճի հարուածով, որից պարզ կարելի է կարդալ «նորոգե-
ցաւ բառը. կամրջի հարաւային ծայրի արևմտեան ճակատի
ստորին մասում, այն է հին շինուածի մէջ, հագուցած է մեծ,
ոլկած քար արձանագրութեան համար, բայց առանց արձա-
նագրութեան, գուցէ մաշուած»:

Այսպէս ուրեմն անյայտ է մնում հոյակապ կամրջի ոչ
միայն նախկին հիմնարկութեան, այլ և վերանորոգութեան
թուականն ու հանգամանքը. ով է շինել և շինել տուել, երբ
է շինուել կամ նորոգուել, մնում է անյայտ. Հայր Սլիշանի ա-
սելով, ոմանք վերագրում են Պարսից թագաւոր Դարեհ Վըշ-
տասպին, 500 տարի Քըհատոսից առաջ, ոմանք յատկացնում
են Վաղարշ հայոց թագաւորին երկրորդ դարու վերջում և այլք
Արաքներին: Բայց ով և լինէր հրաշակերտ շինութեան կառու-
ցանողն, արժանի էր հոյակապ մահարձանի, «զի յաղթողագոյն
գտեալ քան զտիեզերակալ Հռովմայեցիս՝ Ծաղիր եղեւ Ծըն-
կեց ալեացն»: Հայր Սլիշանն այս ուժեղ բառերով երեխ ակ-

նարկում է Վիրդիկոսի բանաստեղծական արտայայտութեան, որ նրասին անհանդուրժող է կամըջի:

Յայտնի է, որ իւրաքանչիւր մի նշանաւոր հին շինութիւն, լինի նա վանք, կարաւանսարայ, բերդ, կամուրջ և այլն կամ մի որ և է նշանաւոր տեղ, ունի իւր առասպելական պատմութիւնը: Յիշենք Անի քաղաքում հովուի եկեղեցին, Ազստեղեամբ հարում Կղզ-կալա, աղջկաբերդն, որ Աշոտ երկաթին են յատկացնում, նամախու մօտ Խնուսաի գիւղի բերդը, որ նոյն պէս Կըզ-կալասի է կոչում, նոյն Շամախու գաւառում Նաւազարախանայայ բլուրն, որի գագաթին շինած է այժմ Մարինկա ռուսական գիւղը, ութ վերստ սորանից հեռու Կըզ-մէշդան (աղջկայ ասպարէզ) հարթավայրն, ուր այժմ Առտրախանկայ ռուսական գիւղն է և առաջինում նաղարայ էին նուագում, երբ երկրորդում թագաւորագն աղջկը ձիարշաւ ջիրիթ էր իսակում և այլն և այլն:

Սոյնպիսի առասպելական պատմութիւն ունի նաև Քեօփ-րի քէօյի կամուրջն, որի մասին, ութսունական թուականին, կարծեօք նոր Դար լրագրում մի ընդարձակ յօդուած լոյս աեսաւ: Բայց ես այստեղ կպատմեմ այն, ինչ որ ինքս եմ լսել իւր տեղում: Քեօփի քէօյում և Թորդանում:

Այնահին ժամանակներում Քեօփի քէօյում բնակւում էր մի աղքատ այրի կին իւր միակ որդու հետ, որ հովութիւն էր անում: Մի աներեսոյթ ձիաւոր առնելով այդ հովուին՝ իջեցնում է անյայտ երկրում իշխանազն օրիորդի մօտ, որ նորացնցուտիների փոխարէն հագջնում է հարսանեաց թանկագին հանդերձ: Առաւօտեան արշալոյսին աներեսոյթ ձիաւորը հովուին հարսանեաց շորերում նորից իջեցնում է իւր գիւղում: Քեօփ-րի քէօյում: Հովուին այդ դիւթական ճանապարհորդութիւնը թւաւմ էր մի հրաշալի երազ: Բայց իրականութիւնը ցոյց տուաւ որ նա, որքան էլ կաշկանդուած լինէր երջանիկ վայրկեանի յիշողութեամբ, այնուամենայնիւ հովու էր, ուստի նորից հագաւցնցուտիներ և հօտը քշեց դէպի Հըննառի: լանջերի արօտատեղերը: Անցաւ ժամանակ և իշխանազն օրիորդի լոյս աշխարհ եկած մանուկն օրօրոցի մէջ անդադար լալիս էր և հնար չկար մի բռակ անդամ նորա: Ճայնը կորելաւ: Օրիորդին խորհուրդ են տալիս գնալ աշխարհից աշխարհ և որոնել մանկան հօրը: Բայց ինչպէս: Ահա առնելով մեծ հարստութիւն և մանկանը գալիս է օրիորդը Քեօփի քէօյ, շինում է կարաւանսարայն ու

բնակւում է մէջը: Տեսնելով երկու գետերի խառնուրդն, եղակացնում է օրիորդն, որ եթէ այդտեղ կանգնացնէ կամուրջ, երթևեկներ շատ կլինին և զուցէ նորանց մէջ գանի մանկան հօրը: Ոչ օրիորդի մաքովն է անցնում, որ մանկան հայր հովիւն ամեն օր Հըննառի լանջերի բարձրութիւնից զարմացմամբ զննում է կարաւանսարայի հոյակապ շինութիւնը և ոչ հովիւն է հասկանում, որ իւր գիւղին կպած կարաւանսարայի բնակիչ շքնաղ օսարուկին իւր հարազատն է:

Հիմնարկւում է կամուրջը, ժողովւում են շատ մշակներ շինութիւնը յառաջ տանելու և բացի այդ, իւրաքանչիւրին նորանցից մի օր յանձնուում էր օրօրել երեխային: Մշակների թըւում լինում էր և Գեօփրի քէօյցի հովիւր Մշակներից մինի ձեռքում լալկան մանուկը յանկարծ կտրում է լացը: Ազնուազարմ մայրը միւս օրն էլ նոյն մշակին է յանձնում օրօրելու, որի ժամանակ մանուկը կրկին լուում է: Այսպէս շարունակում է մի քանի օր: Օրիորդը մշակին հրաւիրում է իւր տուն, բայց դեռ ևս ոչ մի խօսք չէ բանում:

Այդ մշակը Գեօփրի քէօյցի հովիւն էր, որ մի օր, լացած օրիորդի հարուստ և շքեղ կենցաղավարութիւնից, մտաքերում է, որ ինքն ունի թանկաղին շորեր, իւր համար անպէտք և որ կարելի էր մի քանի գումարով ծախսել օրիորդի վերայ. ուստի հովիւն իւր մօր ձեռքով առաջարկում է օրիորդին զնել հանդերձը, որ տեսնելուն պէս իսկոյն մատը կծում է... Ի վերջոյ ճանաչելով հովուին, օրիորդն ամուսնանում է նորա վերայ, երկու ամուսինները հասնում են բաղտաւորութեան և միասին շարունակում են կամրջի շինութիւնը մինչ ցաւարտ, որ և կոչուեց Չոբանի կամուրջ:

Տեսնում էք, թէ ժողովրդի վառ երևակայութիւնն ինչպիսի բանահիւսական ձե է տուել կամրջի անյայտ պատմութեանը: Նա տեսնելով իւր առաջ մի հրաշակերա շինութիւն, անպատճառ աշխատում է իմանալ նորա ծագումն և երբ վերաստուգութիւն շունի, զոհանում է իւր երևակայական բացատրութեամբ, կապելով կամուրջը մի ինչ որ ազնուազարմ օրիորդի և աղքատ հովուի հետ:

Վաղարշ թագաւորի այդ տեղ իւր անունով մի աւան հիմնելն էլ Խորենացին համարում է մի դէպք, մի սատահական գործ, որովհետեւ իրեն թէ նորա մայրը ձմերոց գնալու ժամանակ դէպի Արարատեան դաշտը, յանկարծ ճանակարգի մէջ:

իւր երասին ու Մուրցը խառնում են իրար, երկանց մէջ լոյս աշխարհ է բերում մանուկ Վաղարշին, որ յետոյ, ի յիշատակ այս դէպքի, հէնց իւր ծննդեան տեղում հիմնում է աւան և կոչում է նորան իւր անունով Վաղարշաւան։ Հետեաբար, եթէ նորա ծնունդը տեղի չունենար այդ կէտում, Վաղարշաւանը չէր կարող հիմնուել։

Սակայն այդ բոլոր պատմուածները չունեն մեծակիունշանակութիւն։ Ճշմարտութիւնը, հաւանականօրէն, այն է որ այդ կէտը, Մուրցի և Նրասինի կամ Բինգեօլի և Հասանղալայ գետերի խառնուրդն ամենակարևոր հաղորդակցական նշանակութիւն է ունեցել ամենահին ժամանակներում, ունի և մեր ժամանակ։ Ճանապարհը Կարին քաղաքի վրայով դէպի Արարատ և դէպի Պարսկաստան՝ անցնելիս է եղել Արաքսի հոսանքի երկու ափերուին ևս Ուստի կարենութիւնն անհրաժեշտ էր համարում դիւրացնել այդտեղ հաղորդակցութեան միջոցը ստեղծելով մի կամուրջ Արաքսի վերայ։

Ուրեմն հաւանական է, որ հեռատես Վաղարշն այս նը-պատակի համար լինի հիմնած իւր աւանը և գուցէ թէ կամուրջն էլ հիմնած լինի նա, որ յետոյ ենթարկուած է վերանորոգութեան։ Հ. Պ. Ալիշանն ընդունում է. որ Վաղարշն այդ կետն ընտրել է պետութեան զգուշութեան համար, այլ և իբրև արքունի ճանապարհի բաժտուն։ Հ. Ալիշանը հաստատում է եօթներորդ դարու պատմիչ Սէրիոսի վկայութեամբ։ որ Բոլորապահակ կոչուած տեղը, Նրասինայ և Մուրցի խառնուրդում անշուշտ Քեօփրի քէօյի մօտն էր և որ Բոլորապահակը յիշատակում է Ֆլորենտիոյ վաճառականութեան խրատագրի մէջ, 1335 թուին, որ կարաւանների ճանապարհի տեղագրութիւնն է Կիլիկիոյ Այսա քաղաքից մինչև Ատրպատականի Դավրեժն և որ Կարինից ու Բաղանիքից (Հասանղալայ) յետոյ յիշում է Bologbecche (Պոլորքէքքէ) որ նոյն է Բոլորապահակն ։ Նոյնը յիշատակում են ԺԹ դարու սկզբումն երկու ֆրանսիացին ճանապարհորդ Բոժուռ և Ծոփեռ։ Ուրեմն այս տեղ, Նրասինի անցքում, Վաղարշի կամ նորա նախնիքների կողմից պահակների տեղ էր նշանակուած ճանապարհորդների ապահովութեան, արքունական բաժի և զինուրական տեսչութեան համար։¹⁾

Վերջացնելով Զոբանի կամուրջի զննութիւնն ես թեքուեցի դէպի հարաւ և գնացի Թորդան գիւղը։

¹⁾ Այրարատ, Էջ 25.

ԳԱԶԳՆՐՈՒՆԻ

(Կը շարունակուի)